Հավելված
ՀՀ կառավարության 2021 թվականի
մայիսի 13-ի N 754 - Ն որոշման

ՕԶՈՆԱՅԻՆ ՇԵՐՏԸ ՔԱՅՔԱՅՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ՀԻԴՐՈՖՏՈՐԱԾԽԱ-
ԾԻՆՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԸ
(ՔՎՈՏԱՆԵՐԸ)

1. Օզոնային շերտը քայքայող նյութերի՝ Հայաստանի Հանրապետություն ներմուծման թույլատրելի ընդհանուր չափաքանակները (քվոտաները) սահմանվում են ըստ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 5-ի N 90-Ն որոշման NN 1 և 5 հավելվածներին համապատասխան խմբերի և ըստ տարիների:

2. Հիդրոֆտորածխածինների՝ Հայաստանի Հանրապետություն ներմուծման թույլատրելի ընդհանուր չափաքանակները (քվոտաները) սահմանվում են ըստ Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի օգոստոսի 20-ի N 1368-Ն որոշման հավելվածին համապատասխան խմբերի և ըստ տարիների:

3. Սահմանվում են օզոնային շերտը քայքայող նյութերի և հիդրոֆտորածխածինների ներմուծման հետևյալ ընդհանուր չափաքանակները (քվոտաները)՝

| Խումբը | Տարին | Ներմուծման առավելագույն չափաքանակը (տոննա/տարի) |
|---|---|---|
| Անվանացանկ A-ի խումբ I, II<br>Անվանացանկ B-ի խումբ I, II, III<br>Անվանացանկ C-ի խումբ II, III<br>Անվանացանկ E-ի խումբ I | 2011 թ.-ից սկսած | 0 |
| Անվանացանկ C-ի խումբ I | 2020-2021 թթ.<br>2022-2024 թթ.<br>2025-2029 թթ.<br>2030-2039 թթ.<br>2040 թ.-ից սկսած | 82,35<br>42,31<br>41,17<br>3,17<br>0 |

| | | |
|---|---|---|
| Անվանացանկ F-ի խումբ I, II | 2020-2023 թթ. | անսահմանափակ |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

13.05.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ